

5642



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Երզնկա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«04» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 182 - 24

Նախաձեռնող՝

Երևանի քաղաքապետարան
Արգիշտիի փողոց 1

Հիմնադրույթային
փաստաթուղթ՝

«Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ»
ք.Երևան

Առդիր՝ 13 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 182 - 24

«04» սեպտեմբերի 2024թ.

Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ

Նախաձեռնող՝	Երևանի քաղաքապետարան
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրության փաստաթղթի նախագիծ և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	ք. Երևան

Ներածական մաս. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի հայեցակարգը և սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է երկրի և մասնավորապես քաղաքի ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիր իրականացմամբ:

Երևանի գլխավոր հատակագիծը մշակվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ -ի կողմից Երևան քաղաքի գոյություն ունեցող վարչատարածքային սահմանների շարջանակներում, այն հանդիսանում է տարածական պլանավորման փաստաթուղթ և սահմանում է քաղաքի զարգացման ռազմավարությունը՝ 2024-2030թթ. հեռանկարով: Հանդիսանում է նաև ղեկավար փաստաթուղթ, որի հաստատված հիմնական դրույթները հիմք են ծառայում գոտիների, ենթակառուցվածքների, քաղաքի վարչական շրջանների ու քաղաքային տնտեսության ոլորտների զարգացմանը համապատասխան նպատակային ծրագրերում:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման /այսուհետ՝ ՌԷԳ/ հաշվետվությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ 150- Ն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրության փաստաթուղթ:

Նախագծային փաստաթղթում արտացոլվել են երկրի և քաղաքի զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են Երևան քաղաքի համաչափ զարգացմանը: Համաձայն իրականացվող պետական քաղաքականության, սույն գլխավոր հատակագիծը ներկայանում է որպես անցումային ժամանակաշրջանի գլխավոր հատակագիծ: Երևան քաղաքի կայուն զարգացման առկա նախադրյալների, սոցիալ տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների գործունեորդ պայմանավորված, պահանջ է դրվել, մշակելու և իրականացնելու քաղաքի իրական



հնարավորությունները հաշվի առնող նոր գլխավոր հատակագիծ: Վերջինովս պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փաստաթղթերի մշակման այնպիսի նպատակային ծրագրի, որը կնպաստի քաղաքի կայուն զարգացման նպատակների իրականացմանը, առկա խնդիրների վերհանմանն ու լուծմանը: Հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների գործողության ազդեցությունները փորձաքննվել են՝ ելնելով շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունների հետևյալ չափանիշներից՝

1) հիմնադրությամբ փաստաթղթի համապատասխանությունը շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության պահպանությանն ուղղված գործընթացներին, մասնավորապես, կայուն զարգացմանը նպաստելու նպատակով:

2) հիմնադրությամբ փաստաթղթի գործողությունների շրջանակը՝ հաշվի առնելով գտնվելու վայրը, բնույթը, մասշտաբը, շահագործման պայմանները:

4) շրջակա միջավայրի՝ ներառյալ բնակչության առողջության վրա հնարավոր ազդեցությունների բնույթը, դիսկերը, հավանականությունը, տևողությունը, հաճախականությունը, ծավալը, հնարավոր ազդեցության ենթակա տարածքի չափը, ազդեցության ենթակա բնակչության թվաքանակը:


5) հիմնադրությամբ փաստաթղթի ազդեցության աստիճանը բնության հատուկ պահպանվող տարածքների կամ անտառային հողերի կամ բնակավայրերի կանաչ գոտիների կամ պատմամշակութային հուշարձանների վրա:

Նկարագրական մաս. Երևան քաղաքը հանդիսանում է Հայստանի վարչաքաղաքական և տնտեսական կենտրոնը: Այն գտնվում է ծովի մակարդակից 850-1300 մետր բարձրության վրա, Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում (հյուսիսային լայնության 40° 04'–40° 14' և արևելյան երկայնության 44° 23'–44° 37'), Կոտայքի և Եղվարդի նախալեռնային սարավանդների սահմանագծում՝ զբաղեցնելով է 224.1765 կմ² մակերես: Երևան քաղաքը իր մեջ ներառում է 12 վարչական շրջան՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: 2022թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Երևանում ապրում է 1 092 800 մարդ:

Երևան քաղաքում առկա են Կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ գրանցված երկու բնության հուշարձաններ՝ Անանուն սյունաձև բազալտներ քաղաքի ձախափնյա մասում՝ Սբ. Սարգիս եկեղեցու մոտ և Անանուն սյունաձև բազալտներ Հրազդանի կիրճի ձախափնյա մասում: Երևան քաղաքից 8 կմ հարավ-արևելք գտնվում է Էրեբունի պետական արգելոցը:

Մայրաքաղաքին բնորոշ են տաք, չոր ամառներով և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներով կլիման: Չոր կլիման և աղքատ բուսական ծածկը պայմանավորում են հողային պրոֆիլի բաժանվածությունը հորիզոնների և օրգանական նյութերով թույլ հագեցվածությունը:

Քաղաքի տարածքում հողային ծածկույթի հզորությունը միջին հաշվով կազմում է 30-40 սմ, որից ներքև տարածվում է կրակավի տեսքով մանրացված լեռնային ապարներ: Հողերը հիմնականում ունեն կավավազային կամ ավազակավային մեխանիկական կազմ: Հողի ամենավերին հորիզոններում հումուսի քանակը 1%-ը չի գերազանցում: Երևան քաղաքի տարածքում դիտվում են սողանքներ, փլվածքներ, ապարաթափվածքներ, ջրածածկում և ջրաողողում, սելավներ, ջրհեղեղներ և



էրոզիաններ: Սողանքային երևույթների առաջացումը հիմնականում պատճառաբանված է քաղաքի տարածքի ռելիեֆով և երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով, տեկտոնական կառուցվածքով և տեխնածին հանգամանքներով (անկանոն հողհանումներ ճանապարհների կառուցման համար, սողանքավտանգ լանջերի գերբեռնում շենքերով և շինություններով, գրունտների արհեստական ջրհագեցում և այլն): Սողանքային երևույթները հիմնականում տարածված են՝ Հրազդան գետի կիրճի, Սարի Թաղ-Ջրվեժի, Ձորաղբյուրի, Նուբարաշենի սողանքային տեղամասերում: Իսկ փլուզման, փլվածքային և ապարաթափման երևույթները՝ Հրազդան, Գետառ, Ջրվեժ և Բերդաձոր գետերի զառիթափերին: Այդ առումով առավել վատ վիճակում է Հրազդան գետի կանիոնը:

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, և Մուշաղբյուր: Քաղաքի տարածքում կան արհեստական ջրավազաններ՝ Երևանյան լիճը, Վարդավառի լիճը և մի շարք մանր ջրամբարներ: Քաղաքի ջրային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 141.9 հա: Հրազդան գետի ջրերը օգտագործվում են էլեկտրաէներգիա ստանալու, ոռոգման և արդյունաբերական կարիքների համար, իսկ հունը՝ որպես հոսքաջրերի ընդունիչ: Հրազդան գետից կատարվող ջրառը ոռոգման ջրանցքների և պոմպակայանների համակարգով չի գերազանցում 50% ապահովվածության ծախսը, իսկ խմելու ջրի ջրառը ստորերկրյա աղբյուրներից՝ չի գերազանցում նրանց բնական ելքին:

Երևանն աչքի է ընկնում բնական լանդշաֆտների առկայությամբ, որոնք հանդիսանում են ֆլորայի և ֆաունայի բազմաթիվ ներկայացուցիչների բնակատեղեր: Բնական լանդշաֆտների որոշակի բազմազանությունը (Հրազդան գետի կիրճը, Կարմիր կավերի անապատի տեղամասեր Վերին Ջրաշենի, Երևան-Շորբուլաղի և Նուբարաշենի շրջա-կայքում, կիսաանապատային տեղամասեր Կարմիր բլրի շրջակայքում, Երևանի հյուսիսային շրջանների տափաստանային տեղամասեր) հնարավոր է դարձնում տարբեր բնական էկոհակարգերի գոյությունը իրենց յուրօրինակ կենսաբազմազանությամբ:

Երևանում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքի, 01.07.2024թ. դրությամբ տրամադրված է 16 ընդերքօգտագործման իրավունք (12 հանքավայրում): 12 հանքավայրերից 1-ը ստորգետնյա է (Ավանի աղի կոմբինատ), 11-ը՝ բացահանք: հանքավայրերը հիմնականում շահագործվում են Նոր Նորք վարչական շրջանի հարավ-արևելյան, հարավային հատվածներում, Աջափնյակ վարչական շրջանի արևմտյան հատվածում և Էրեբունի վարչական շրջանի հյուսիսային հատվածում: Եվս 1 հանքավայր շահագործվում է Ավան վարչական շրջանում, սակայն քարաղը այստեղ շահագործվում է ստորգետնյա պայմաններում: Հանքավայրերի շահագործումն իրականացվում է բաց եղանակով և ուղեկցվում է ռելիեֆի հսկայական փոփոխություններով: Առաջանում են մինչև 10 մետր և ավելի խորության գոգավորություններ և փոսորակներ, որոնց պատճառով ձևավորվում են լանջային պրոցեսներ, սողանքներ, փլվածքներ, տեխնածին գրունտներ, կատարվում են ջրային ռեսուրսների ձևավորման և տեղաբաշխման փոփոխություններ:



աղտոտումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքավայրի տարածքը մոտ է բնակելի թաղամասին և սահմանակից է անտառային հողերին, նպատակահարմար չէ նոր ընդերքօգտագործման իրավունքների տրամադրումը այս տարածքում (հնարավոր չէ ապահովել սանիտարապաշտպան գոտիների չափերը): Հանքավայրի տարածքի ռեկուլտիվացիայից հետո այն կհանդիսանա բուժերային գոտի բնակելի շրջանների և գործող հանքավայրերի միջև: Ներկայումս Երևանի քաղաքապետարանը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը քննարկում են Ջրվեժի գիպսատար կավերի և բազալտների հանքավայրի և դրա մերձակա տարածքներում առկա օգտակար հանածոների մնացորդային պաշարների գրոյացման հնարավորությունը՝ հանքավայրի ռեկուլտիվացիայի աշխատանքները սկսելու համար:

Երևան քաղաքի ջրատարների և բաշխիչ ցանցերի երկարությունը կազմում է 2250 կմ, որից 1000 կմ և ավելին ենթակա է վերակառուցման: Համակարգը ունի 103 կապտաժային ջրառներ, 81 արտեզյան ինքնաբուխ և 30 խորքային պոմպերով հորատանցքեր: 1 շնչին ընկնող ջրօգտագործումը կազմում է 953 լ/օր:

• ջրամատակարարման համակարգը ունի ջրամբարներ՝ 306.4 հազ. ³ մ., որից 96.5 հազ. խոր. մ. ծավալով ջրամբարները գտնվում են վթարային վիճակում: Գործում են 4 խոշոր և շուրջ 2100 բակային պոմպակայաններ, որոնց կեսը գրանցված չեն:

Կոյուղու հավաքող ցանցի անկատարության պատճառով քաղաքի տարածքի շուրջ 50-60 կետերում կեղտաջրերը առանց որևէ մշակման թողնվում են Ջրվեժ, Ողջաբերդ, Գետառ, Հրազդան և այլ բազմաթիվ ձորակներ: Քաղաքի տարածքը նշված թողարկներից ազատելու նպատակով սկսած 1960-ական թվականներից նախագծվել և վերանախագծվել է կոլեկտոր Հրազդան գետի կիրճով, որը բացի կիրճի կոյուղացումից կարող էր ընդունել կեղտաջրեր բոլոր ցածրադիր տեղանքներից: Երևան քաղաքի տարածքում գործում են մի քանի աղբավայրեր: Նախատեսվում է Նուբարաշենի և Աջափնյայի աղբավայրերի մեկուսացումը և փակում, որը թափոնների կառավարման համալիր մի մասն է: Ծրագրի իրականացման շրջանակներում կկառուցվի նոր սանիտարական աղբավայրի, կիրականացվի աղբի տեսակավորում և վերամշակում, արտադրական թափոնների գույքագրում, վտանգավոր թափոնների քանակի ճշգրտում և այլն:

Քաղաքի տարածքում քաղաքաշինական համակարգերի անվտանգ շահագործումը ապահովելու նպատակով անհրաժեշտ են նպատակաուղղված միջոցառումներ՝ իրավիճակը բարելավելու, կամ առնվազն այն կայունացնելու համար: Անհրաժեշտ են հատուկ միջոցառումներ իրականացնել այն տեղամասերում, որտեղ ստորերկրյա ջրերի մակարդակը մշտապես տատանվում է 0-5 մետր խորությունների վրա, որպիսի հնարավորինս խուսափենք ենթաողողումներից, ջրակալումներից ու ջրածածկումներից: Ռելիեֆային պայմանների բարելավման համար անհրաժեշտ է կանխարգելիչ պաշտպանական միջոցառումներ՝ լանջերի թեքությունների մեղմացում, բնական երևույթներով առաջացած ձորակների, հեղեղատների խանդակների, ինչպես նաև տեխնաձին տարբեր միջամտություններով (քարհանքեր, շինփորվածքներ) մասնատված տեղամասերի հարթեցում: Քաղաքաշինական համակարգերի կարգավորման միջոցառումների մեջ են մտնում նաև բացասական հատկություններ դրսևորող գրունտների հորացումը:



թեք լանջերով, բարդ ռելիեֆով ներկայացված, այդ թվում նախալեռնային թմբաբլրային ռելիեֆով տեղամասերում բացասական բնական երևույթներ (ուժեղ մակերեսային ողողումներ, դեֆլուկցիա, էոզիա) առաջացնող գործոնների չեզոքացումը, հակասելավային, հակահեղեղային կանխարգելիչ պաշտպանական միջոցառումների իրականացումը:

Երևան քաղաքի հատակագծային կառուցվածքի տարածական բաղկացուցիչներ ընդունվում են հատակագծային գոտիները, որոնք միավորում են մի քանի հատակագծային շրջաններ: Բոլոր հատակագծային գոտիները խմբավորվում են հիմնական հատակագծային հաղորդակցական ուղղությունների շուրջը: Հատակագծային ուղղությունների առանցքներն են դառնում ագլոմերացիայի հիմնական և կենտրոնական քաղաքները կապող արագընթաց շարժման մայրուղիները: Անընդհատ շարժման մայրուղիները՝ հատուկ կազմակերպվող կառուցվածքահատակագծային հանգույցներում շոշափելով կենտրոնը՝ նախագծվող առանձին հատակագծային գոտիները կապում են ագլոմերացիայի բնակավայրերի և ռեկրեացիոն գոտիների հետ: Քաղաքի կենտրոնի (Կենտրոնական հատակագծային գոտի) կարգավորումը և մյուս հատակագծային գոտիների կազմավորումը կապվում է տվյալ տարածքների կոնկրետ բնութագրերի և առաջացած հիմնախնդիրների համալիր լուծման պահանջների հետ: Երևանի «Կենտրոն» վարչական շրջանը իր գործառույթներով առանձնացվում է որպես առանձին հատակագծային գոտի, որտեղից դուրս է բերվում արագընթաց միջանցիկ շարժումը: Հարավային գոտիները միտված են քաղաքի այդ հատվածի բնակելի և խոշոր արդյունաբերական շրջանների համակարգված կանոնակարգմանը և հնարավորիս՝ կանաչապատմանը: Հյուսիսարևմտյան գոտում հիմնական խնդիրներից են՝ կառուցապատման խտության նվազեցումը և բնակվելու միջավայրի ընդհանուր վերակառուցումը: Հարավարևմտյան գոտիների հիմնական ուղղվածությունը՝ նոր բնակելի թաղամասերի կազմակերպումն ու քաղաքային միջավայրի կատարելագործումն է: Քաղաքի ներկայիս կառուցվածքահատակագծային համակարգի հիմքը կազմավորում են մայրուղային ուղղությունները, մետրոյի ցանցը և դրանց հետ առնչվող կառուցվածքային հատակագծային զարգացած հասարակական տրանսպորտային հանգույցները, որոնք պարունակելով բազմապիսի գործառույթներ, կազմավորվում են կենտրոնական և ծայրամասային համակցման տարածքներում և հատակագծային շրջանների զարգացած կենտրոններում: Նոր բնակելի թաղամասերը կազմակերպվում են մայրաքաղաքի գրեթե ամբողջ տարածքով՝ հյուսիս-արևմտյան, հյուսիս արևելյան և հարավարևմտյան ուղղություններում, ինչպես նաև՝ Նորքի զանգվածի և Քանաքեռ-Զեյթուն ու Նորք Մարաշ վարչական շրջանների տարածքներում: Մնացած տարածքներում բնակելի շենքերը տեղադրվում են լոկալ կերպով հիմնականում գոյություն ունեցող կառուցապատումը կարգավորելու և միջավայրը վերակառուցելու գործընթացին համընթաց: Բոլոր նոր բնակելի թաղամասերը, բացառությամբ արդեն գոյություն ունեցող դեռևս չկառուցապատված նպատակային հողհատկացումների, կազմակերպվում են խառը կառուցապատման գոտիներում՝ համատեղված սպասարկման և ոչ վնասակար արտադրական օբյեկտների համալիրների հետ, ինչը համապատասխանում է կայուն զարգացման քաղաքաշինության հիմնարար սկզբունքներին: «Կենտրոն» վարչական շրջանի տարածքի հետ անջվող



արդյունաբերական շենքերը առաջարկվում է վերապրոֆիլավորել և օգտագործել հիմնականում հասարակական սպասարկման նպատակով: Գյուղական արտադրության նպատակով զբաղեցրաց բոլոր տարածքները նույնպես վերապրոֆիլավորվում են: Քաղաքում, բնակավայրի տարածքի այլ հողերի շրջանակում, նախատեսվում են աստիճանական վերապրոֆիլավորման բուֆերային գոտիներ, որպես բոլոր հիմնական գործառական գոտիների հետ հատակագծորեն կապված՝ սահմանակից բաց տարածությունների միասնական համակարգ: Այս գոտիները դիտարկվում են որպես քաղաքաշինական սահմանափակումների լրացուցիչ մակարդակ և պետք է ապահովեն քաղաքի անհրաժեշտ դինամիկ զարգացման և ծայրահեղ իրավիճակների դեպքում հրատապ միջոցառումների իրականացման, տրանսպորտային հաղորդակցման մայրուղիների և դրանց գոտիների տեղադրման, վառելիքաէներգետիկ պաշարների պահեստավորման համար տարածքի պահուստավորումը, բնական միջավայրն ու բնակավայրի սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական հողերի, օգտագործված հանքավայրերի աստիճանական վերապրոֆիլավորման հնարավորությունը:

Բուֆերային գոտիներ են նախատեսվում նաև ճանապարհների, գերեզմանների, էներգետիկայի և այլ կոմունալ օբյեկտների այն պաշտպանիչ գոտիների տարածքներում, որոնք այսօր արդեն զբաղված են բնակելի և հասարակական կառույցներով: Այս տարածքներում, մինչև հաշվարկային ժամկետի ավարտը, պետք է արգելվեն բոլոր նոր բնակելի և հասարակական կառուցապատման և վերանորոգման աշխատանքներ:

Երևանի համայնքային 21 գերեզմանատները զբաղեցնում են մոտ 550 հա տարածք: Ներքին Չարբախի, Ավանի, Քանաքեռի և Շահումյան 1 գերեզմանատները համարվում են մասնակի փակ: Այստեղ նոր տեղեր չեն հատկացվում: Չնայած օրենսդրական արգելքին՝ որոշ քաղաքացիներ ինքնակամ ընդլայնում են գերեզմանատների սահմաններն ու ապօրինի հուղարկավորություններ կազմակերպում: Գերեզմանատներում իրականացվում են չափագրումներ լիցենզավորված չափագրողների կողմից, առանձնացվում են ազատ տարածքներն ու համարակալվում:

Կատարվելու են գերեզմանների արգելապատնեշներով սահմանազատում, տարածքների բարեկարգում, աղբամանների տեղադրում, նոր գերեզմանատան հիմնում: Ոլորտի խնդիրների կարգավորման համար քաղաքային իշխանությունը մի շարք այլ նախաձեռնություններ ևս ունի, որոնք ըստ առաջնահերթության են իրագործվելու:

Նախորդ գլխավոր հատակագծի իրացման վերլուծությունը բացահայտում է հետևյալը՝

- շրջանաձև անընդհատ շարժման մայրուղին ենթակա է համալրման,
- Դավթաշենի կամուրջի, ինչպես նաև Կոմիտաս, Ա.Բաչատրյան, Վ.Վաղարշյան ուղղությունների գերծանրաբեռնվածության պատճառով առաջացել է անհրաժեշտություն «Պ.Սեվակի փողոց-Թբիլիսյան խճուղի-Ազատության պողոտա խաչմերուկից իրականացնել նոր ուղղություն դեպի Դավթաշեն (Չովունու-խճուղի)՝ կամրջով և ուղեբաժանքներով,



- Ազաթանգեղոսի փողոց-Արշակունյաց պողոտա (Գ.Լուսավորչի խաչմերուկից) մայրուղի անընդհատ երթևեկությունը լիարժեք կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է կառուցել հինգ ուղեբաժանքներ,

- «Չվարթնոց օդանավակայանի և Երևան քաղաքի կապը հուսալի կազմակերպելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ուղղությունների իրականացում,

- Արևելյան շրջանցիկ ճանապարհի (Մ-15) 6կմ-ոց հատվածը (Մուշավան-Նուբարաշեն) ենթակա է վերակառուցման՝ լրացուցիչ ինժեներական հետազոտություններ իրականացնելուց հետո,

- անհրաժեշտ է տեղափոխել երկաթգծի սկզբնամասը ներկայումս գործող «Ալմաստ» կայարանից՝ «Քանաքեռ» կայարանի շրջակայք, ինչը թույլ կտա շարունակել Ուլնեցի-Ռուբենյանց ճանապարհային ժապավենը մինչև Աճառյան փողոց,

- անհրաժեշտ է իրականացնել մետրոպոլիտենի հեռանկարային կայարանների շինարարական հրապարակների տեղամասերի սխեմաների մշակում:

Հաշվի առնելով տրանսպորտի աշխատանքի անհավասարաչափ բաշխվածությունը քաղաքի տարածքում հիմնական ծանրաբեռնվածությունը, իրեն հատուկ առանձնահատկության շնորհիվ, ընկնում է քաղաքի կենտրոնական մասի վրա, որտեղ մայրուղային ցանցի խտության ցուցանիշը պետք է լինի բարձր քան քաղաքի միջինը (հանձնարարելի խտությունը 4.5-5.0 կմ/կմ²): Մայրուղային փողոցների երկարությունը քաղաքի կենտրոնական մասի սահմաններում կազմում է մոտ 31.53 կմ, իսկ խտությունը՝ 5.7 կմ/կմ²: Նախորդ՝ 2005-2020թթ Գլխավոր հատակագծով նախատեսված նոր մայրուղային փողոցների և ճանապարհների ընդհանուր կազմի որոշ հատվածներ ներկայումս չեն կարող իրագործվել, քանի որ անցած ժամանակահատվածում նրանց ուղեգծերի վրա կատարվել են կառուցապատման աշխատանքներ: Գլխավոր հատակագծով նախատեսվում է մետրոպոլիտենի գործող գծի երկարացում՝ «Բարեկամություն» կայարանից դեպի Աջափնյակ բնակելի թաղամաս:

Պատճառաբանական մաս. Երևանի գլխավոր հատակագիծ ՌԷԳ հաշվետվության փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է քաղաքի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ՝ այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել առկա խնդիրները:



Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետի նստավայրում իրականացվել է հանրային երկրորդ լսումը: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առաջարկություններն և դիտողությունները փաստաթղթի վերաբերյալ: Փորձաքննական ամբողջ գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, էկոնոմիկայի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունները, կադաստրի և քաղաքաշինության կոմիտեներն, ՀՀ պետական պահպանության ծառայությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության բոլոր մասնագիտացված ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Եզրափակիչ մաս. Երևանի զարգացման գլխավոր հատակագծի նկատմամբ ներկայացվող բնապահպանական պահանջների հիմքում ընկած է քաղաքի կայուն զարգացման ուղղվածությունն ի հաշիվ բնապահպանական և սոցիալտնտեսական կարիքների հավասարակշռվածության և բնապահպանական իրավիճակի բարելավմանը: Երևանի քաղաքաշինական զարգացման բնապահպանական պահանջների իրացման տեխնոլոգիական պայմանները ներառում են.

- էներգետիկայի օբյեկտների էներգաարդյունավետության բարձրացում,
- արդյունաբերության վերապրոֆիլավորում և արդիականացում (սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաներ),
- ավտոմոբիլային պարկի զինումը՝ արտանետվող գազերի չեզոքացուցիչներով,
- ջրամատակարարման, ջրահեռացման, հեղեղատար ցանցերի վերակառուցումը և արդիականացումը,
- աերացիայի կայանի վերակառուցումը,
- հոսքաջրերի և աղտոտված մակերևութային ջրերի ապահովումը նորմատիվային պահանջներին համապատասխան մաքրման կայանների տեղադրում,
- կենցաղային թափոնների վերամշակում՝ արդյունաբերական մեթոդներով,
- արդյունաբերական թափոնների երկրորդային օգտագործման և վերամշակման մակարդակի բարձրացում,
- քաղաքի տարածքի ճարտարագիտական պաշտպանություն՝ անբարենպաստ երկրաբանական պրոցեսներից:

Բնապահպանական պահանջների իրականացման քաղաքաշինական ուղղությունը նախատեսնում է.

- բնակչության առողջության անվտանգությանը սպառնացող բնապահպանական տեսակետից վտանգավոր գոտիների վերացումը ուժեղ տեխնաձին ծանրաբեռնվածության ենթարկվող տարածքների պանացիա



(առողջացում) և վերականգնում,

- անշարժ աղտոտման աղբյուրներից օդի կայուն գերնորմատիվային աղտոտման գոտիների վերացումը

- մայրուղիներին կից տարածքների օդի աղտոտվածության նվազեցում,

- բնակելի և հասարակական կառուցապատման տարածքում աղմկային անհարմարավետության գոտիների վերացումը,

- փողոցա-ճանապարհային ցանցի զարգացում և ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում,

- քաղաքի կենտրոնի բեռնաթափումը ավտոտրանսպորտից,

- հետիոտն փողոցների ձևավորում,

- կանաչ տնկարկների մակերեսների վերականգնում և ընդլայնում՝ ներառյալ մայրուղիների և բուֆերային գոտիների երկարությամբ հատուկ կանաչապատում:

Երևան քաղաքին բնորոշ է մթնոլորտային օդի և ջրային ավազանների մաքրության, կանաչապատ տարածքների պահպանության ու ընդլայնման հիմնախնդիրները: Մայրաքաղաքի օդային ավազանում գերակշռում են 4 վնասակար նյութեր՝ փոշի, ազոտի և ածխածնի օքսիդներ, ծծմբային անհիդրիդ: Քաղաքի մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրները հեռանկարում դարձյալ կմնան ավտոտրանսպորտը, էներգետիկայի օբյեկտները (Երևանի ՋԷԿ-ը և բնակկոմունալ սեկտորի ջերմության աղբյուրները) և արդյունաբերական ձեռնարկությունները: Հաշվի առնելով քաղաքի ավտոմոբիլային պարկի աճի բարձր տեմպերը (հիմնականում մարդատար ավտոմեքենաների հաշվին), հաշվարկային ժամկետի վերջում օդի աղտոտման մեջ գերակայող բաժինը՝ մինչև 95%, կկազմի ավտոմոբիլային տրանսպորտը: Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները գերազանցում են համապատասխան թույլատրելի ՍԹԿ-ները տասնյակ անգամ:

Էներգետիկայի օբյեկտների արտանետումների կրճատման հիմնական ուղղությունը էներգաարդյունավետության բարձրացումն է: Երևան ՋԷԿ-ի գոլորշագազային համակցված ցիկլով աշխատող նոր էներգաբլոկի ներդրումը թույլ կտա 20%-ով կրճատել արտանետումները: Գլխավոր հատակագծով նախատեսված է քաղաքային ջերմամատակարարման համակարգի վերկանգնում և արդիականացում:

Քաղաքի աղմկային ֆոնը հիմնականում ձևավորվում է տրանսպորտի հաշվին: Վերջին 15 տարվա ընթացքում տրանսպորտային հոսքերի կառուցվածքում և ինտենսիվության մեջ տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով տրանսպորտային աղմուկի համարժեք մակարդակը բնակելի կառուցապատման սահմանագծում գերազանցում է ՍԹԿ-ն՝ 1-5 դԲԱ-ով: Ընդհանուր առմամբ քաղաքի աղմուկային իրավիճակը կարելի է համարել անբարենպաստ: Հեռանկարում քաղաքային աղմուկի մեջ հիմնական դերը կպատկանի տրանսպորտին Հաշվի առնելով, որ տրանսպորտային աղմուկի բարձր մակարդակի հիմնական պատճառներից մեկը քաղաքային տրանսպորտային միջոցների աճն է, աղմուկի մակարդակի իջեցմանը (կայունացմանը) կնպաստի գլխավոր հատակագծով նախատեսված փողոցաճանապարհային ցանցի զարգացման և փոփոխության:



իրականացումը: Ըստ սխեմայի նախատեսվում է օղակաձև արագընթաց ճանապարհի կառուցման հաշվին քաղաքի կենտրոնական մասի բեռնաթափում տարանցիկ տրանսպորտային հոսքերից, գործող հատակագծային կառուցվածքի հետ շաղկապված միասնական փողոցաճանապարհային ցանցի համակարգի ստեղծում, տրանսպորտային ուղեբաժանքների և նոր մայրուղային փողոցների կառուցում և այլն: Մայրուղային փողոցների և ճանապարհների երկարությունը կավելանա 79 կմ-ով և հաշվարկային ժամկետում կկազմի 293 կմ: Սխեմայի իրականացումը կհանգեցնի տրանսպորտային հոսքերի վերաբաշխմանը, առավել ծանրաբեռնված մայրուղիներում (Բաղրամյան, Մաշտոց, Կոմիտաս, Արշակունյաց, Ազատության, Տիգրան Մեծ, պողոտաներ, Կիլյան, Սեբաստիայի փողոցներ և այլն) երթևեկության ինտենսիվության մոտավորապես 30%-ով կրճատմանը և համապատասխանաբար կհանգեցնի աղմուկի մակարդակի իջեցմանը:

Փողոցաճանապարհային ցանցի սխեմայի զարգացման իրականացումից բացի, աղմկային անհարմարավետության մեղմմանը կնպաստի հետևյալ միջոցառումների իրականացումը

- ճանապարհային ծածկի բարելավումը
- ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործումը և փողոցների թողունակության բարձրացումը
- հասարակական տրանսպորտում տրոլեյբուսների և մետրոպոլիտենի բաժնեչափի բարձրացում և համապատասխանաբար, միկրոավտոբուսների բաժնեչափի իջեցում
- մայրուղիների երկարությամբ կանաչ պաշտպանիչ շերտերի ստեղծում,
- «Էրեբունի» օդանավակայանի դուրս բերումը քաղաքի տարածքից
- Տիգրան Մեծի պողոտայից մինչև կահույքի գործարան երկաթգծի հատվածի հանումը
- ավտոպարկի նորացումը և ավտոմեքենաների տեխնիկական վիճակի հսկողության ուժեղացումը:

Աղմուկից պաշտպանվելու վերը նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա հիմնական մայրուղիներում աղմուկի մակարդակն իջեցնել 2-4 դԲ-ով և բնակելի կառուցապատման մեծ մասում ապահովել աղմուկի սահմանային թուլատրելի մակարդակ: Աղմկային անհամարավետությունը նվազագույնի հասցնելուն մեծապես կնպաստի աղմուկապաշտպան պատուհանների և աղմուկամեկուսիչ ապակեպատման լայն կիրառությունը:


Քաղաքում էլեկտրամագնիսական ճառագայթման ամենահզոր կետային աղբյուրը Երևանի ռադիոհեռուստահաղորդիչ կենտրոնի հեռուստաաշտարակն է: Քաղաքի տարածքում տեղադրված են նաև էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող մի քանի տասնյակ ռադիոտեխնիկական սարքավորումներ: Հեռանկարում սպասվում է հեռուստաաշտարակի վրա տեղադրված ռադիոհեռուստահաղորդիչների գումարային հզորության աննշան ավելացում կապված ծրագրերի հնարավոր ավելացման հետ: Գծային աղբյուրներից՝ օդային բարձրավույտ է, էլեկտրամագնիսական ճառագայթումը հեռանկարում չի փոփոխվի: Բնակչության և շրջակա միջավայրի վրա արտաքին էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցության մեղմման հիմնական միջոցը՝ ճառագայթման



աղբյուրից անհրաժեշտ տարածքային խզման՝ սանիտարապաշտպանական գոտու ապահովումն է:

Երևանի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որը պետք է ներառի բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:

Երևան քաղաքի կանաչ տարածքների վերականգնման և նոր կանաչ տարածքների ստեղծման համար առաջարկվում է վերակառուցել Երևանի ՋԷԿ-ի մոտակայքում գտնվող 24 հա մակերես ունեցող տնկարանային տնտեսությունը, կառուցել ոռոգման ցանց և հագեցնել այն տնկանյութի աճեցման ժամանակակից գիական սարքավորումներով: Նույն տարածքում առաջարկվում է հիմնադրել 1000 մ² մակերես ունեցող ժամանակակից սարքավորումներով հագեցված ջերմատնային տնտեսություն: Քաղաքի լանդշաֆտային առանձնահատկություններից ելնելով անհրաժեշտ է ունենալ տնկարանային տնտեսություններ նաև բարձրադիր գոտում: Վերոհիշյալ տնկարանների և ջերմատների արդյունավետ գործունեության պայմաններում հնարավոր կլինի բավարարել քաղաքի կարիքները անհրաժեշտ քանակի որակյալ տնկանյութով: Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը առաջարկվում է ավելացնել 1758.7 հեկտարով և մոտակա 15 տարիների ընթացքում հասցնել 2299.0 հա-ի: Այդ դեպքում բնակչության ապահովվածությունը ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներով կհասնի 19.15 մ²/մարդ սահմանագծին, 20-ը կգերազանցի նորմատիվային ցուցանիշի նվազագույն պահանջները: Առաջնահերթ անհրաժեշտ է վերականգնել քաղաքի համար չափազանց կարևոր բնապահպանական նշանակություն ունեցող հեռուստաաշտարակի շրջակայքի կանաչ զանգվածները: Նշված տարածքներում առաջարկվում է հիմնադրել 250 հա ընդհանուր մակերեսով քաղաքային նշանակության բարեկարգ անտառապուրակներ: Առաջարկվում է մեծածավալ կանաչապատման աշխատանքներ իրականացնել Մալաթիա-Սեբաստիա համայնքի սահմաններում տեղակայված Դալմայի այգիներում՝ 256 հա մակերեսի վրա (քաղաքային նշանակության պատմամշակութային համալիր), Հրազդանի կիրճում, Նուբարաշեն, Էրեբունի, Դավթաշեն և այլ համայնքների տարածքներում: Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը նախատեսվում է 294 հա-ով ավելացնել նոր բնակելի կառույցների տարածքների և վերակառուցման ենթակա թաղամասերի կանաչապատման հաշվին: Կառուցապատված թաղամասերում քաղաքի սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների տեսակարար կշիռը կկազմի 37%: Հատուկ նշանակության կանաչ տարածքների մակերեսը կավելանա շուրջ 933 հա-ով այդ թվում գերեզմանները շրջապատող սանիտարական կանաչ զանգվածների ստեղծման, նորաստեղծ փառագների մայրուղիների կանաչապատման և այն հաշվին: Ընդհանուր առմամբ, քաղաքի կանաչ տարածքների մակերեսը գլխավոր հատակագծով նախատեսված ծավալների իրականացման դեպքում կավելանա 2985 հա և բնակչության ընդհանուր ապահովվածությունը կանաչ տարածքներով կարող է հասնել 66.13 12/մարդ (ներկայումս այն կազմում է 44.8 մ²/մարդ): Հարկ է նշել, որ քաղաքի հեռանկարային կանաչապատման ներկայացված ծավալները իրատեսական են, սակայն պահանջում են ծրագրավորված փուլային իրականացում և մեծածավալ



Ֆինանսական ներդրումներ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցմանն ուղղված գործուն միջոցներ ձեռնարկել և վերահսկողություն իրականացնել՝ արտանետումների քանակը ոչ միայն չթողնելով հատել բնակչության համար սահմանված մահացու ցուցանիշները, այլև նվազեցնելով՝ դրանք մոտեցնել ՍԹԿ-ին:
2. Պատմամշակութային հուշարձանների, պատմա-ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի, շինությունների, թաղամասերի առկայության դեպքում, որպես անհրաժեշտ պայման, պետք է առանձնացվեն պատմական կառուցապատման գոտիները, սահմանվեն դրանց պահպանմանն ուղղված հատուկ ռեժիմները:
3. Քաղաքային բնակավայրում՝ տարածքների խնայողության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է նախատեսել ստորգետնյա տարածքների համալիր օգտագործում՝ տրանսպորտի կառուցվածքների, առևտրի, հասարակական սննդի, կոմունալ-կենցաղային սպասարկման հաստատությունների և այլ կառուցվածքների, ինժեներատեխնիկական սարքավորումների, տարբեր նշանակության արտադրական և կոմունալ-պահեստային օբյեկտների տեղակայման համար՝ ապահովելով նմանատիպի կառույցներին ներկայացվող սանիտարական, բնապահպանական, հակահրդեհային պահանջները: Ըստ գոտիների թույլատրված օգտագործումների (կառուցապատումների) ստորգետնյա տարածքներ կարող են նախատեսվել բոլոր գոտիներում՝ ելնելով ինժեներաերկրաբանական պայմանների հնարավորություններից:
4. Ինժեներական ցանցերն առավելապես պետք է տեղաբաշխել փողոցների և ճանապարհների լայնական սահմաններում, մայթերի տակ կամ բաժանիչ գոտիներում՝ ջերմային ցանցեր կամ անցումային թունելներ, բաժանիչ գոտիներում՝ ջրմուղ, գազատար, տնտեսական-կենցաղային և հեղեղատար կոյուղի: Կարմիր գծի և կառուցապատման գծի միջև ընկած գոտում անհրաժեշտ է տեղադրել ցածր ճնշման գազի և մալուխային ցանցերը (ուժային, կապի, ազդանշանային և կարգավորիչ (դիսպետչերային): Երթևեկելի մասի 22 մետրից ավելի լայնության դեպքում անհրաժեշտ է ջրմուղի ցանցի տեղադրումը նախատեսել փողոցի երկու կողմերում:
5. Հնարավոր դիսկերից խուսափելու համար մանկական հաստատությունների և բուժական հիմնարկների տարածքներում սահմանափակել բջջային կապի ալեհավաքների տեղակայումը՝ հաշվի առնելով էլեկտրամագնիսական ճառագայթման հզորության հոսքի խտության նորմերը՝ 10 մկվատտ 1 սմ²-ում:
6. Տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40 %-ից ոչ պակաս, իսկ բնակելի շրջանի տարածքի սահմաններում՝ 25 %-ից ոչ պակաս՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի 108-Ն որոշմամբ հաստատված բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը



ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի դրույթների համաձայն:

7. Զբոսայգիների տարածքների ընդհանուր հաշվեկշռում կանաչաձածկ տարածքների մակերեսը պետք է ընդունել 70 %-ից ոչ պակաս: Անջրանցիկ տարածքների 25-30%-ը պետք է կազմեն արահետային ցանցը, հարթ կառույցները, սպորտային և խաղահրապարակների, ինչպես նաև հաճախորդների սպասարկման համար նախատեսված կառույցները:
8. Ապահովել բոլոր վարչական շրջաններում «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կետերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ» հիմնադրույթային փաստաթղթի նախագծին և ՌԷԳ հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սուսաննա Անտոնյան